

նափոր մէկ բաղխումէն իսկ խորապէս կ'ազդուի:
 Ան է որ ասուուածային գաղտնիքն ունի հոգեց
 վիճակով թարգմանելու ամէն ինչ՝ որ Կը շրջա-
 պատէ իր էռութիւնը, ամէն ինչ որ երկաներու
 ընդէջէն կը յայտնուի անսահման խորհուրդի
 մը և անհուն գեղեցկութեան մը պէս: Իր գեղա-
 րուեստական եսապաշտութիւնը միայն և միայն
 բնակուած է ամբողջապէս արտայայտուրեանց
 ամբոխով մը, և արտայայտուրիմէն հոս միևնույն
 հօր իմաստն ունի ինչպէս անգրենին մէջ՝
expression: Քնարերգակ բանաւողն գգայ-
 նականութիւնը անպիքը վրգովմունքի մէջ է միշտ
 Արտաքին աշխարհն կամ իրու իրականութեան
 հարուածներէն վիրաւոր՝ իր սրտին բարախում-
 ները տեսլական հաճոյքներու տառապանքովը
 կ'արիւնքն... F. Schlegel գերման գեղեցկագէնը
 իրաւունք ունէր մտածելու թէ այնքան գժուարին
 էր չշփոթել քնարերգուրիմէն և գգայնակա-
 նուրինք:

Վահան Տէրեանի պատկերները տարասամօրէն
 գուշակուած անուշութիւններ են, երփնանկարներ
 (pastel), որոնց տժգոյն անըշականութիւնը բա-
 րապէս և այնքան սերտօրէն կը գաշնակուի անոնց
 մէջ ապրող զգացութեառուն և մտածութեառուն
 հետ.

Սարի յետեռում շողերը մեան,
 Անոյշ դասերը զատեց կապոյտ մէզ,
 Տիուր երեկոն զարկել է վրան:

Եւ հոս դարձեալ, ինչպէս միշտ արտաքին
 պատկերն արձագանքը կ'արտայայտուի ներքին
 պատկերին մէջ.

Անուսը կարօտով կանչում է քէզ՝ մ'կ:

Ինչպէս հետեւեալ տողերուն մէջ՝ ուր շատ աւելի
 քաղցր է քնարերգութիւնը.

Մաղեկներն աւա՛ թնթոյչ փակւեցին,
 Բացեցին երկնի ծաղկիներն անասո.
 Աւ ասանապիկը իմ միրու լորին.
 — Արդեօք ո՞ւ ես դու, իմ անուզ երազ:

Վահան Տէրեան խորհրդապաշտ մըն է, ինչպէս
 Մալլարմէ ու Վէլէլէն որոնց խորհրդապատու-
 թիւնը կը կայանար որոշ բառերու նորակերպ
 գործածութեան մը մէջ՝ ի նկատի ունենալով
 միշտ այդ բառերուն հնչականութիւնը, և ուրեմն
 ամբողջ թերթուածին եղանակաւորումը: Վէլ-
 էլէնեան խորհրդապաշտութեան ամբողջ թանկա-
 գին գանձերը շնչան անշուշտ Վահան Տէրեանի

թերթուածներուն մէջ: Աղբիւրը նոյնն է: Խնչո՞ւ
 համար միևնույն մարզարիտները չեն լեցուցած
 երկութիւն ալ սափորները: Երբ Տէրեանի սափո-
 րին մէջ կը մենանի ջուրին երգը, Վէլէլէն գրաէ
 սոր ծիծաղներ տալ անոր: և արձագանզը հե-
 ռաւոր աղբիւրին կարօտը կը հնչեցնէ:

Մալլարմէ սակայն աւելի մեծապէս կը հեռա-
 նայ Տէրեանէն՝ իրու երեսութական ձև: Հակա-
 դրական պատկերներու և բառերու նորութիւնը՝
 որ Մալլարմէն քերթութիւնը ցայտուն արժէքը
 կը ներկայացնէ, հազորագիտ է Տէրեանի մօտ:
 Եւ ինոյ եցացած պարզած պարզութիւնը Տէրեանի
 ոտանաւորներուն՝ զինքը ցոյց պատի տար իրքն
 տժգոյն ուխտակից մը՝ կապոյտ և ծիրանիի ան-
 սահման ու բոցավոտ գոյներուն ի տես զգայա-
 խաբօրէն վերացած Մալլարմէին մօտ.

L'azur! L'azur! L'azur! je suis hanté!

(Ժարումակելի)

ԱՐՄԵՆԵՐԱԿԱ

ԹԻՐԵԱՔԵԱՆ ԲԺ. ՑԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՆ

(Ժար. տիս բազմ. 1921 էջ 196)



Արիազաթ ԲԱՌԱՐԱՆ Նորոդ տեսու-
 թեամբը և յաներուածովը, աշխատասիրեց
 Յ. Թիրաքաբեան, Վիկենա, Միսիրարեան
 Տպարան, 1914: — Թուղթ մը Վիկապի-
 ներու վերջը (յէջ 390) կը կարդանք.
 «Մահօրութիւն: — Ներկայ աշխատասիրու-
 թեան տպագրութիւնը աւարտեցաւ 1920
 թուին: Ողբացեալ հօրս հետագայ ձեռա-
 գրաց մէջ կը կարդամ թէ սուզած և
 հաստատած է ցըրիւ (Տ. Գրիւ) բառին
 գործածութիւնը Պարսից մէջ: — Նիւելորը
 1920, Մ. Յ. Թ.»: Ուրեմն՝ հարկ չկայ
 յաւելուլ թէ այս հատորը՝ թժ. Յ. Թի-
 րաքաբեանի ազգին նուիրած ժրաշան եր-
 կասիրութիւններուն ամենավերջինն է, —
 արդէն կանխաւ ալ յիշատակուեցաւ:
 «Արիազայ:» Ահաւասիկ նոր բարգու-
 թիւն մը որ ամէն ընթերցողի յարգանըը
 պիտի պահանջէ: — Խորհրդածութիւն մը:

ինչ կը նշանակէ Արիահայ: Ու գողցես մէկմէկ ելեկորական՝ շանթազգի՝ ջահեր բլային Եղիշէն, Խորենացին, Եղիշէն, Փարպեցին... որ ընդուտնուին մեր մասութիւնապատ միուրը լուսաւորելու: Եղիշիկի ճաճանչը ցոլանալով մեր քժիշկ-գրագէտի ճակատին վրայ, պիտի կարծել տար առողջարանական կամ մանաւանդ ախտարանական բառովը մը, — « Հայեցեալ յազգն արիական՝ թէ իգասէր էր», — բայց... մանրերկորդի մը խոկումն իսկ պիտի մատնանշէր որ Արին և Պարսիկը հոմանիշներ նկատուած են՝ Զազարի «Պատմութիւն Հայոց»ին 1873ի տպագրութեան ցանկին մէջ. — Մ. Նալբանդեանց իւր «Հէմի Է՛լ խօսենք» երգին մէջ կը մեկնարանէ.

Անարգ պարսիկը այս ու այն թեմի կարգում է տեսուչ ըստ իր չար կամաց, Ու մնաց գեռ «Կեցցէ՛ Արին» գոռում ենք. —

Ըստ այդմ Արիահայ՝ ըսեկ է Պարսկահայ, — Բայց ինչո՞ւ յարգելի հեղինակը ընաթեր է տատամսելի արմատը և ոչ վերջինս՝ զոր ամէն ընթերցող պիտի կարենար ըմբռնել անդամարար: — Լսեցէք, ահաւասիկ ինքն հեղինակը կը խօսի.

« Ձեմ ըսեր զուտ պարսկական, վասն « զի բառեր կան որ մեզ ծանօթ պարսկեւ « բէնով ալ չեն մենաւուիր, այսինքն միւ « ջին պ.ով, Տէրիով ու Փէհէվիով, այլ « մինչեւ զենդ, մինչեւ սանսկրիտ բարձրաւ « նալու չ: Կը պատահի երբեմն ալ որ « ասոնցմէ ալ լոյս մը չառնուի, այլ « հնդկորպական միւս ցեղակցաց մէջ գրտ « նուի բուն աղրիւրը, ինչ որ միանգամ « ևս կը հաստատէ այն վարկածը՝ թէ էր « երբեմն Արիական հնագոյն մայր-բար « բառ մը, այսօր չիշեալ, որոյ ճառագայ « թումներն են այսօրուան կենդանի կամ « ին քարացած բոլոր հնդկորպական լիւ « զուները: Ասոր համար է որ մենք ներ « կայ աշխատութիւնը Արիահայ անուա « նեցինց աւելի՝ քան Պարսկահայ »:

Իսկ « ԲԱՌԱՐԱՄՆ»ը: — Մին է՝ ամէն

ընթերցողի համար՝ այն ամենաընտանի անոնչներէն որ գոյութիւն ունին, բառ մը՝ որու մասին շատ բնական պիտի թուէր նոյն իսկ շխորհիւր, թող թէ խօսիլ... և սակայն այդպէս չէ: Բառարան գործածելը որքան զիւրին, ընդհակառակը՝ զայն կազմեն ալ նոյնքան և հազարապատիկ զըմուարին գործ մ'է: Ալաշեցուցիչ... հրաշալի՛... աննման աշխատութիւններ են՝ հայերուս ունեցած՝ բազդիրքները՝ նախ համայնաճառափիկները և ապա նաև մասնագիտականները Ամենահսկայ երկեր են՝ Միխիթար Արքահօր և իւր բանի մը աշակերտներուն « Բառզիրք Հայկացեան Լեզուին», ու մանաւանդ « Նոր Բառզիրք Հայկացեան Լեզուին», չերջինս՝ է՝ « Երկասիրուրիս երից Վարդապետաց յաշակերտուրեն Միհեր Միխիթարայ Արքահօր՝ Հ. Գարբրիելի Աւանիքեան, Հ. Խաչատրոյ Սիսրմէեան, Հ. Միրտիյ Ալգերեան » — երեք վեհապանն անձնաւորութիւններ՝ որոնք ըիչ մը ուրիշ կերպով կը խորհին, թերես, նկատմամբ հայ լեզուին՝ ուստի և բառերուն: Իրենց պահպանողական գաղափարներով ատոք՝ կը սիրէին ազգային աւանդական պատմութիւնն ալ ի նկատ առնել նաև լեզուարանութեան մէջ: Իրենց կ'ըսէին: « Բնդ զիսաւորմ՝ « որ Մայր անուանեցան Լեզուք, զառա « ջինն ունի տեղի Հայկական մեր բար « բառ, որպէս մտերիմ և կարեոր ընտաւ « նութեամբ յառաջազայեալի լեզուէ մեծի « նահապետին նոյի յլԱրարատեան աշ « խարհ մեր գաղարիւր աշխարհակեցոյց « տապանաւ իւրով հանդերձ ցվախճան « իւր: Եւ այն իսկ է պատճառն անժխտելի, « զի յամենայն զողցես լեզուս ազգաց և « ազնաց սփիւռ տարածեալ յետ վաղափուլ « աշտարակին մինչեւ ցօրս ցայս Եշմարին « հետք հայերկենաբարբարաց »: « Զոր հարկ « համարեցաց հետաքննել մասսամբ ի զա « նազան բառս յլնթաց գործոյւ, լծորդս « յորջորջելով իրերաց զըստ իմից մեր»

1. Երեք Հասոր, ապ. Ա. Անեսիկ 1749, 1750, 1769թւ:

2. Երեկո Հասոր, ապ. Ա. Անապ (Ա. Անեսիկ) 1886թւ:

« Ճաւորս հնչմամբ, մինչև յակամայից « քրիլ մեզ ուրեց ուրեց ի զննել զբառս « այլոց ազգաց համեմատութեամբ մեն « բոցս՝ առ ստուգագէտ իմացուած սոցին « և նոցին » :

Արիանայ Բասարակի բազմահուսու հեղինակը տեսած է երբէք Բազիկը Հայկազեան Լեզոյին. — Կը թութ թէ ոչ. և այդ ըստ իսկ՝ անհպաստ պարագայ մինչ է, թէ լ. ը. նմանօրինակ երկասիրութեանց առմիւ պիտի կարենայ աւելի շահաւէտ առաջնորդ մ'ըլլալ քան իւր թոռնիկը՝ Արձեան Բասարակ (տպ. Վենետիկ):

Տիսանը որ թէ լ. ը. գրերէ ամեն, ազգերու յիզոյին մէջ կը նշմարէք հայերէն բառեր։ Արդի լեզուազիտութիւնը, սակայն, - ըննադատական բանապաշտութեամբ - այլազգ կը խորհի և կը զիտէ. գրերէ ամեն ազգերու յիզոյն (Գոխառեալ՝ և ոչ թէ ըստ թէ լ. ին փոխ տրուած) բասեր կան հայերէի մէջ։

Մեր բժշկապետը լեզուազիտներու յառաջադիմասէր խումբին կը վերաբերի։

Համաձայն « կարճամակ »ի թարգմանչին՝ « ոչ ոք պիտի խղճէ կրկնել թէ « Բարեցապարու Հիւալշմանին հոյակապ գործը միշտ հսկայ կոթող մը պիտի մնայ Հայ Բանասիրութեան համար »։ Հիւալշման՝ « Հայերէն լեզուի մէջ մուտ գտած օտար բառերու լիակատար ցուցակները ցոյց կու տայ»¹.

512 բառ՝ յունարէնէ,
686 » պարսկերէնէ,
133 » ասորերէնէ
171 » նոր պարսկերէնէ ու արաբերէնէ։

Ծանօթ է՝ - իւր առաջնութեամբը յարգել՝ - Պալտեցի Տէր - Յովկաննէսեան Գէորգ դպրի « Բասարակ Պարսկերէն ըստ կարգի Հայկական Այրութենից »ը՝ գործնականօրէն գեղեցիկ պատրաստուած ու հրատարակուած 1826ին ի կ. Պոլիս.

1. Ի մէջ այլոց, գեղեցիկ յօպուած մ'ունի Դիկո. Մ. Գարեգինեան « Բազմապետի մէջ », 1908, յէջ 183։

մեծադիր տպագրութիւն մ'է՝ որուն վերջը կայ այրութենօրէն. « Չուգադրութիւն նոյն « նանիշ և նմանաձայն բառեր հասարակ « եղելոց առ պարսիկս և առ հայս, յորոց « աստեղանիշըն (78 բառ) յասուկ պարագ « կականց են, իսկ այլքն անխարի առեալը « յիրերաց (շուրջ 365 բառ). այլ որ բառ « որոյ ազգի սեպհական իցէ՛ չէ՛ ինչ դիւրին « յորոցել »։

Տէր Յ. Հիւնքեարպէյէնտեանի « Սառա զարական Բատարան Հայ Լեզոյին՝ որ մեծամեծ զովեստներու կրկնապատիկը պախարակում լսեց, չափաւորապէս զնահաւատուած պէտք է համարիլ նաև միրեացեանէ. ահաւասիկ իւր կարծիքը. « Բնդէւանուը « ստուգարանութեանց շուրջը կը գեգերի, « անմասն արդի մեթոսներէ, թէպէտե և ունի բաւական յաջող վարկածներ և « հայեացցներ՝ զոր անիրաւութիւն է ան « տեսելը, Գործիս մէջ առիթ պիտի ու « նենամ յաճախ զինքը յիշելու »։

« Հ. Ա. Տէրվիշեանին « Հնդկրոպական « ճախարեզան վերլուծական զնահաւատելի « փորձ մ'է, այլ ուղղակի մեր նպատակին « չայիր »։ (Արիանայ Բորին. Յոջրն.):

Գալով, գարձեալ, Արիանայ Բատարանին, — « Սա՝ ոչ թէ այլոց ուսուցանելու, « այլ յատկապէս իմ ուսանելու հետա « ըլլըրութեանս ծնունդն է », կը իսոսուվանի անկեղծ հեղինակն ինցնին, ապա թէ « չ պիտի չվարանէինը ունենալ ինչ ինչ խստապահանջնութիւններ, թէ և մասնաւորապէս իրաւացիք. զոր օրինակ պիտի փափարէինը որ ամէն պարսկերէն բառի հանդէպ, անիրտիր, գէթ հայերէն տաներով ալ նշանակուած ըլլար անոր հնաչումը։

Բատարանն ալ կընայ մերթ հետաքըրքը բարական ըլլար, ասոր առնաւատչեայ մ'է Արիանայ՝ որ պատասխան կու տայ մեր լոիկ հարցումներուն... Կարդացինը նախ (Բազմ. յէջ 199ա), « Արտպատ Մարասպանաւայ անդարձ » սակայն. Հասկցանը թէ ինչ ըսել է այստեղ, անդարձ : Դիմնենց, ուրեմն, Արիանային և նա պիտի լուսաբանէ. —

« Անդարձ — պէտ. andarz, նոր. » = խորհուրդ, խրամ, յորդոր, կտակ, յորմէ՝

« Անդերքապիտ — պէտ. andarzpat, որ է աւագ խորհրդական, վերակացու, իշխան, ևն։ Աւելի ճիշտը սեղաքապիտ պէտը էր լինել, տեղի չտալու համար շփոթութեան, ինչպէս որ եղած է և հանդերքապիտ ընթերցուած (կարն. ծան. 122¹)։

« Անուխ — Հաղ. ag. ang (հուր) արմատներէն կը բերէ Հ. Ս. Տէրվշշեան» և ածողդ (ուխ) կը բաժնէ։ — Հաղ. (Հիւնցիարպէյնսի) ծաղիկին հնա կը նոյնացնէ տառիկու տեղափոխութեամբ (ծաղին ածդ) և Հ. Ա. Բազրատունիի միամութիւնը կը մատնանշէ ծանօթութեան մէջ, որ ածուխը ըմբռնած է «զի ոչ ևս ծխի իբրև զփայտ» (Քեր, Զարգ.)։ Ես կը կարծեմ

որ ճշմարտութիւնը Հ. Բ. ի ցողի է պարզ և անբռնազրօս։ Անուխը անծուխ է, այո՛, հին պարսկերէնի Օ ժիշտականով որ այս բառին վրայ ալ մնացած է՝ փոխանակ ան-ի փոխուելու, ինչպէս մի և նոյն կազմով և մտօր ունինց ալ աղոնի ո՞ր զ=ծ սովորական փոխանակութեամբ ա-ծուխ է, թիչ մը փոխարերաբար, այսինքն չեփած, չհասունցած։ Եւ երկուցին ալ նախատիպն է պ. Խո- լ իմա հայու չվառած, չեփած։

« Ամանորաբեր — ամանորին և բեր... ի բարդութիւն, որ կը նշանակէ նոր տարւոյ բերք և ոչ թէ ամանոր բերող, ինչպէս ումանը կարծեցին»։

Արիանայ թառարանը օգտաւէտ պիտի ըլլայ ամէն ուսումնասէր ընթերցողներու։ (Շարութակելի) Հ. Գր. Աօւզնան

ՀԻՆ ՄԵԿԻ ՈՒԹԻՒՆ ՄԸ ՅՈՒՍՈ ՄԷԿ ՀԱՏՈՒԱԾԻՆ

ԵՒ ՍԱՌԻ ՊԱՏԻԺԲ ՏԱՆԴԻ ՔԵՐԹՈՒԱԾԻՆ ՄԷԿ

Անդարշար կը հիւրնկալենք բազմավեպի մէջ մեր բարեկամ Հայագէտ թրօֆ. Մանուկին այս նոր և հետաքրքրական ուսումնակարութիւնը, Ոս թարգմանենք թիւն է խոտերէն անտիպ բնագրին, զոր Մնծ. Հեղինակը ի մույշ է լոյս պիտի բնաւական թերթի յը մէջ։ Ս. Խ.

Երկու տարի առաջ բարեյլշատակ Հ. Բարսեղ Սարգսիսեան կը հրատարակէր Ս. Չոսրմոսի գրոյցը ըստ հայ երկու խմբագիրներու, ասոնց թարգմանութիւնն և մեկնութիւնը, պիտի ընեմ մօտ օրերս։ Այսոր կ'ուգեն ընթերցողին մոտադրութիւնը գարձնել միայն Յորայ Լը 22. հատուածին այլարանական մեկնութեան վրայ՝ զոր Ս. Չոսրմոս կ'ընէ իբր համաժողովի կամ

ժողովքի մ'առջև Աթէնքի մէջ, ինչպէս կը կարդանիք խմբագրութեան մէջ, որուն գերինազիրն այս է։ «Վկայարանուրին սրբոյն Յովկմիուսի՝ յորժամ խորհեցար երրալ յերկիրն երանելեաց»։ Արգ՝ ժողովքին մասնակից հմուտներէն մէկը, որուն անունն էր Սպոնինոս՝ կը հարցնէ Զոսիմոսի։ «Ով Վարդապիտ, հարցից տուր յինձ պատասխանի։ Զինչ է այն որ (Յորք) ասէ. Թէ ի գանձն կարկուի երբեալ իշես, կամ յշտնեարանն էնամ. ուստի եղանակը սամ կամ սփոփոցի հարաց ի ներբոյ երկենից. կամ այն որ ասէ. թէ իշանէ իբրև զըոր ծորեալ»։ Եւ Զոսիմոս այս մեկնութիւնը կ'ընէ... Գանձ

1. Անդարքապիտ բառի մասին խոսուած է, լուսաբանութեամբ, ի մէջ այլոց, հետեւեալ գրեթուն մէջ — Պատմ. Եղիշի եւ Քննադատութիւնն. Միքայէլ Փաշայի Փորթուգալ, տպ. Վանաստիկ 1903, յէջ 417 ու 422. — Եղիշի Զարս Յեղագակերք... Հ. Կոնդ Տայեան, տպ. Վանաստիկ 1911, յէջ 192, 208.

2. Վ. Անեներիկ. Ս. Ղազար. 1919 էջ. 21. Այս Վոյուցին շատ պարագաներ կը գտնուին Տանդէի մէջ ալ. կը գտնուին միանգամայն ուրիշ շատ զոյցներու մէջ միշտն զարդ շատ առաջ ինչպէս են զազաներու հանդիպութ, զետերէն անցըց և պրացան լուսացութերը.